57.	Պ. Սերովբէ Պօղոսեան Զորնովեան . . .	1
58.	Տ. Իսկուհի Թադէոսեան Զոռնիեան . . .	1
		90
	Ընդամենայն	493

Խմբագրութիւնս ի դիմաց Միաբանական Ուխտի Մայր Աթոռոյս յայտնումէ իւր սրտեռանդն շնորհակալութիւնը մաղթելով, որ ողորմածն Աստուած լուսաւորէ նուիրատուաց ննջեցելոց հոգիքը, իսկ կենդանեացն՝ զօրութիւն, առողջութիւն և յաջողութիւն շնորհէ։

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՒ.

Տեղեկութիւնք ի վերայ Բարձրագոյն հաստատեալ Եկեղեցական Հոգաբարձութեան Հայազգի անանկաց Աստրախան քաղաքի եւ Արշեստական Դպրոցի ըստ Տնտեսական և Ուսումնական մասանց։

Նախ՝ Աղքատանոցն բացեալ է ի 12 Հոկտեմբերի 1875 ամի վասն քսան և հինգ անձանց, հնգից արանց և քսանից կանանց, որք պատըսպարին ի նմին և ստանան զսնունդ, զզգեստ, զագանելիս և զանկողին համայն պարագայիւք։

Երկրորդ՝ Արշեստական Դպրոցն բացեալ է յ30 Յունվարի 1877 ամի, ուրանօր գտանին որդեգիր գիշերօթիկ աշակերտք երկոտասան անձինք. բաց յերթևեկաց, ստանան զսնունդ, զզգեստ, զագանելիս, զանկողին համայն պարագայիւք և զուսումնական պիտոյս։

Երրորդ՝ Առարկայք ուսմանց են՝ կրօնագիտութիւն, Հայոց և Ռուսաց լեզուք, Թուաբանութիւն, Ընդհանուր գիտութիւն զերկրաչափութենէ, Վայելչագրութիւնք Հայոց և Ռուսաց և գծագրութիւն։

Չորրորդ՝ Աւանդին արշեստք Հիւսնութեան և Կօշկակարութեան։

Հինգերորդ՝ Արշեստական Դպրոցն ըստ ուսմանց առարկայից մտանէ ի շրջան ծխական Դպրոցաց ի Ռուսաստան, և համաձայն 4րդ պարբերութեան 56 յօդ. Բարձրագոյն հաստատեալ ի 13 Յունվարի 1874 ամի կարգադրութեան յաղագս գինուորական հարկի, համագասեալ է ընդ Ուսումնարանաց 4րդ կարգի, զի աւարտողք ի նմին զընթացս սահմանեալ ուսմանց՝ գտանին ի ներգործական ծառայութեան զչորս ամ միայն։

ԴՐԱՄԱԳԼՈՒԽՔ ԵՒ ԵԿԱՄՈՒՏՔ.	Գումար դրամագլխոց	Տոկոսք	
	Ռուբլի	Ռուբլի	Կ.
1. Տասն և հինգ հատ 4/ դրամատոմսակք Արքունական յանձնաժողովոյ շինման պարտուց	84208	3368	32
2. Հորս հատ 5/ տոմսք առաջին և երկրորդ ներներքին փոխառութեան	400	20	»
3. Հինգ հատ երկրորդական Արևելեան փոխառութեան տոմսք	5000	250	»
4. Երեսուն հատ բանկային դրամատոմսակք . .	13100	655	»
5. Մի հատ 6/ դրամատոմսակ Աստրախանայ քաղաքական բանկի	727	43	60
6. Հորս հատ 5/ դրամատոմսակ Աստրախանայ քաղաքական բանկի	7227	361	34
7. Հորս հատ դրամատոմսակք մշանջենաւոր ժամանակաւ տեղական տոկոսեաք	900	58	50
8. Մի հատ դրամատոմսակ Աստրախանայ քաղաքական բանկի մշանջենաւոր ժամանակաւ տեղական տոկոսեաք	6000	390	»
Գումար	117562	5146	76
9. Նուիրագրամբ յաւուրս Տէրունական տօնից Ս. Յարութեան և Ս. Ծննդեան Քրիստոսի, ժողովեալ գանձանակագրամբ յեկեղեցիս և նուէրք բարերար անձանց մերձաւորապէս ի տարին .	»	850	»
10. Վարձագրամբ կրպակաց կտակելոց ի Թովմասու Դաւթեանց	»	500	»
Գումար տարեկան տոկոսեաց և եկամտից .	»	6496	76
Գումար դրամագլխոց	117562		»
Ընդհանուր գումար		124058	76

ԾԱԽՔ.	Գումար	
	Ռուբլի	Կ.
1. Ի պէտս պահպանութեան Արհեստական Դպրոցի .	2000	
2. Ի պէտս պահպանութեան Աղքատանոցի . . .	1800	
3. Յամնական և ի միանուագ նպաստ չքաւորաց . .	1500	
4. Ի նպաստ օժտից չքաւոր օրիորդաց ի ժամ ամուսնութեան	120	
5. Ի նպաստ տեղական Հոգևոր օրիորդաց Դպրոցի .	395	
6. Ի պէտս բժշկութեան չքաւոր հիւանդաց և թաղման նոցա	100	
7. Յապահովութիւն տանց և կրպակաց Հոգաբարձութեան ի հրկիզութենէ	132	
8. Ի վերանորոգութիւն շինուածոց	164	76

9. Ի պէտս ուսումնառութեան չքաւոր հայազգի օրիորդաց յիգական Մարիամեան Գիմնազիայի Աստրախանայ	195	
10. Ի պաշտօնագրամ հոգևորականաց	90	
Գումար տարեկան ծախուց	6496	76
Մնացեալ դրամագլուխք . .	117562	
Ընդհանուր գումար	124058	76

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Ամսոյս 3ին Հայաստանեայց առաջին Լուսաւորիչների, Ս. Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց տօնին հանդիսաւոր Ս. Պատարագից յետոյ Ճեմարանի Հանդիսարանում Ճեմարանական Վարչութեան որոշմամբ ուսումնարանական հանդէս կատարուեց. ի միջի այլ և այլ երգերի Ա. Լսարանի ուսանող Կորիւն Մկրտչեան ճառ կարդաց, որ ընթերցողները կըկարդան ամսատետրակիս մէջ.

—

Ամսոյս 11ին Ս. պատարագից յետոյ, խուռն բազմութեան ներկայութեամբ՝ Մայր Աթոռոյս Միաբանական Ուխտը կատարեց ի Տէր Հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի տարելիցը՝ Այդ տխուր հանդէսը վերջացաւ Գ. Լսարանի ուսանող Ա. Շահիջանեանի գրաւոր ճառով.

Անկասկած բոլոր ներկայ եղողների սրտեռանդն մրմունջն էր առ ողորմածն Աստուած — ի լոյս երեսաց իւրոց հանգուցանել զհոգի հանգուցեալ Հայրապետին, և Ս. Լուսաւորչի աթոռին պարգևել արժանընտիր մի գահակալ՝ ազգն ու Եկեղեցին կառավարելու ըստ արժանւոյն.

—

Ս. Պետերբուրգից գրումեն հետևեալը. «Երէկ (Դեկտեմ. 11ին) Սուրբ Աստուածածնի Մայր Եկեղեցում պատարագից յետոյ հոգևորականները շքեղ հանդիսով կատարեցին Գէորգ Դ. ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի տարեկան հոգեհանգիստը. Ներկայ էին բոլոր գաղթականները, ուսանող երիտասարդութիւնը և Կոմս Լօռու Մելիքեանը».

«Ս. պատարագից յետոյ պատարագիչ քահանան յայտնեց Սինօդից ստացած ծանուցումն — ընտրել ներկայացուցիչ տեղական Հայերի կողմից նոր կաթուղիկոսի ընտրութեանը ներկայ գտնուելու».

—

ԹՇՈՒԱՌՈՒԻ ԱՊԱՍՏԱՆԱՐԱՆԸ.

Երկար բաղխեցի ես դուռը բաղդի,
Բայց չարժանացայ մի հատ լումայի.
Բաղխեցի ամրոց, ուր փառքն է ապրում,
Ասացին, «հեռի, քեզ չենք ճանաչում».
Աշխատանքի մէջ ես տեսայ տանջանք,
Ասացի զուր է ինձ այսպիսի կեանք.
Ման եկայ գտնել բաղդի բնակարան,
Ոչ ոք չըկարաց ցոյց տալ ինձ ճամբան.
Այժմ մի հատիկ տուն է մնացել,
Ես նորա դուռը կըփորձեմ բաղխել.
Աճապարեցի դէպ ի գերեզման,
Թշուառներն այնտեղ միայն հանգիստ կան.

(Գերմաներէնից). Թադէոս Տէր Յովսէփեան.